



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 6.

1846

ՄԱՐՏԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երբ որ արդարեւ ինչպէս չորս կամ հինգ արեւմտեան արդոյ հետ ինչպէս վարդապետ է :

ՏՂԱՅ մը երբոր երկու տարեկան կ'ըլլայ, առջի կէս թմրութեան վիճակէն կ'ազատի, ու կամաց կամաց մարմինը զօրանալով նոր կեանք մը կը սկսի. տղուն կերպարանքը նոր կենդանութիւն մը կ'առնէ, լեզուն կը բացուի, ու խօսելու փափաքը կը սկսի. անանկ որ շատ անգամ նոր նոր բառեր քովէն կը հնարէ, ու լսած բառերուն նմանաձայն բառեր կը շինէ, ու մէկ անգամ զուրցած բանը շատ անգամ նորէն նորէն կը կրկնէ, մանաւանդ երբոր նոյն բանին ուշադրութիւն ընելու ըլլաս, կամ թէ ինքը շատ հաւնած ըլլայ զուրցած բանին :

Որովհետեւ տղան աս միջոցիս բաւական բան կրնայ ըմբռնել, և զգացմունքը խիստ փափուկ է, անոր համար աս հասակին մէջ մեծ ուշադրութիւն ընելու է իրեն զգացմունքերը աղէկ կըթելու : Պզտիկ յանդիմանութենէ մը տղուն սիրտը կ'ելլէ ու կը սկսի լալ, ու մէյմըն ալ նոյն յան-

ցանքը չընելու առաջադրութիւն կ'ընէ. ուրեմն պէտք է ծանր կերպով յանդիմանել կամ պատժել. վասն զի մէկէն ատելութեան ախտն ալ հետը մէկտեղ կը սկսի : Իրեք կամ չորս տարեկան տղու մը սիրտը այնպէս փափուկ է որ ուրիշին քաշած ցաւը կամ վիշտը տեսնելով ինքն ալ սաստիկ կը ցաւի, ու թէ որ դիմացինը լալու ըլլայ՝ շատ անգամ ինքն ալ արցունքը չկրնար բռնել : Նոյն դեպքին կերպով պիտի զգուշանան՝ որ չըլլայ թէ սաստկութեամբ կամ տղուն անգութ բաներ պատմելով կամ ցուցնելով՝ անոր սրտին փափուկութիւնը կորսնցընել տան :

Երբոր տղայ մը հինգ տարեկան կ'ըլլայ, մարմնոյն հետ միտքն ալ կամաց կամաց կը սկսի բացուիլ, ու տեսած կամ լսած բաներուն վրայ կրնայ քիչ մը տրամաբանութիւն ընել, անոր համար է որ տղոց Բանական հասակը ըսուածը հինգ կամ վեց տարուէն

կը սկսի . և ինչ որ անկէ առաջ տես-
նելով յիշողութեանը մէջ պահեր է՝
անոնց վրայ մտքովը դատաստան մը
կ'ընէ , ու երբեմն բան բանի հետ կը
բաղդատէ . ուստի ան հասակէն կրը-
նայ կանոնաւոր ոճով մը մանր բաներ
սորվիլ , բայց միշտ զուարճութեամբ քիչ
քիչ . վասն զի թէ միտքը և թէ մարմի-
նը դեռ ինչպէս որ պէտք է հաստա-
տուած չըլլալով՝ կրնայ փաստուիլ :

Ս'անր տղոց սիրտը կը թելու , միտքը
զուարճացնելու , յիշողութիւնը սրե-
լու , դատմունքը շտկելու , բարքը
միշտ 'ի բարին ուղղելու համար՝ խե-
լացի ու սրտաշարժ պատմութիւններ ,
առակներ ու ասոնց նման բաներ պատ-
մէլէն օգտակար բան չկայ : Բայց աս
պատմութիւններուն մէջ խիստ օգ-
տակար են մանր տղոց վրայ յարմար-
ցուցածները . վասն զի անոնց մէջ
տղան իրեն նման պզտիկ տղոց խօսա-
ծը , ըրածը , սխալմունքը ու զղջալը
տեսնելով՝ կը զմայլի , ու գէշութիւ-
նը զգուշիւ և աղէկութիւնը սիրելի
կ'ըլլայ իրեն :

Իրաւ է որ արեւելք ալ ծնողք իրենց
մատղաշ տղոցը պատմութիւններ կը
պատմեն . բայց շատին պատմածը ինչ
տեսակ բաներ են . — խրպրիկներու ,
արիւնով լեցուն ջրհորներու , մեզմէն
աղէկներու , սատանաներու , գողե-
րու , աւազակներու , արապներու , ա-
ռանց գլխու պտըտող մարդիկներու
և ասոնց նման խենթ ու խելառ բա-
ներու պատմութիւններ : Ինոնցմով
տղաքը կը վախցնեն , որպէս զի խե-
լօք կենան , բայց չեն գիտեր թէ ինչ
մեծամեծ փաստներու պատճառ կ'ըլ-
լան : Ինչիմարական պատմութեանց
պատճառաւն է որ տղոց սրտին մէջ
սոսկալի վախ մը կը տիրէ , մութ
տեղ չեն կրնար կենալ , առանձին սե-
նեկի մէջ չեն կրնար պառկիլ , պզտի
վտանգի մը ատեն սիրտ չեն ըներ ի-
րենք զիրենք պաշտպանելու . աւելոր-
դապաշտական բաներու մէկէն կը հա-
ւատան , ու պզտիկուց մտքերնին ա-
նանկ այլանդակ բաներով լեցուած

ըլլալով՝ վերջը խիստ մեծ դժուարու-
թիւն կը քաշեն ան տեսակ բաները
մտքերնէն դուրս հանելու : Ինչ փա-
փաքելի բան էր թէ որ ամէն ծնողք
այնպիսի այլանդակ առասպելները
մէկդի ձգելով , օգտակար պատմու-
թիւններ պատմէին , ու տղոց միտքը
պատրաստէին զուարճալի ուսմունք-
ներու . մանաւանդ որ աս տեսակ օգ-
տակար պատմութեանց գրքեր ազ-
դերնուս մէջ չեն ալ պակսիր՝ թէ աշ-
խարհաբառ ըլլայ և թէ տաճկերէն :

Վերադարձնելու ծաղիկներու և գիտան-
ները շարունակելու հարաւ : — Պրանքիւնեան
ընկերութիւն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ և քաղաքական կե-
նաց հիմն ու առաջ տանողը ուսմունքն
ու իմաստութիւնն ըլլալով , շատ կա-
րօտ է ազգ մը՝ մանաւանդ ետեւ մնա-
ցածը՝ ամէն հնարք բանեցնելու որ
ուսմունքն ու անոր օգուտը ծաւալէ :
Բարեբաղդաբար ազգերնիս իր կա-
րօտութիւնը ճանչնալով , քանի մը
տարիէ 'ի վեր աս բանիս այնչափ
ջանք կը ցուցնէ որ արդարապէս ծաղ-
կած ազգերու մէջ ալ գովութե ար-
ժանի պիտի ըլլայ . առ ջանքիս վկայ են
Ղոստանդնուպօլսէն ինչուան հընդ-
կաստան և ալ հեռու կղզիներու
մէջ բացուած դպրոցները , տպարան-
ները , լրագիրները , ընկերութիւննե-
րը . որոնցմով մեծ յոյս կրնայ ունե-
նալ ազգերնիս իր փափաքին հասնե-
լու՝ թէ որ լաւ կերպով բանեցուին
աս ուսումնական հնարքները :

Բայց որովհետեւ աս ամէն հնարք-
ներն ալ աւելի տղոց ու աշակերտաց
համար դրուած են , իսկ ազգերնիս
ոչ միայն լաւ յաջողներու՝ հապա-
լաւ վարպետներու և օգնականներու
ալ կարօտ է , պէտք է հնարք մ'ալ
գտնել , որ իմաստութեան ետեւէ ըլ-
լալը աշակերտութեան տարիներովը